# Արձանագրություն № 2

## «ՇԲՕ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան, Զորափի 40 — 11.02.2016թ. ժ 11:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Վահե Միրիջանյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Սամվել Մանուկյանը, Հովհաննես Հարությունյանը |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Կարինե Սարգսյան |

## 1. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին

(Վ.Միրիջանյան)

1.1 02.02.2016թ-ին № «ՇԲՕ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով հրավերը էլեկտրոնային եղանակով՝ aprang-15-6@shh.gnumner.am հասցեով, ուղարկվել է «Գնումների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված՝ «Ապրանքներ» → «Ավտոպահեստամասեր» ցանկում ընդգրկված կազմակերպություններին, ինչպես նաև սահմանված կարգով հրավերը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

1.2 Ընդունել ի գիտություն, որ.
սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| հ/հ | Կազմակերպության անվանումը | Հասցե, հեռախոս, էլ.փոստի հասցեն |
|---|---|---|
| 1 | «Գլոբալ Մոթորս» ՓԲԸ | Կոտայքի մարզ, գ.Առինջ, Երևան-Սևան մայրուղու աջակողմյան հատված; 010-20-99-84; globalmotors2007@gmail.com |

1.3 Ընդունել ի գիտություն, որ.
կազմակերպությունների կողմից ներկայացված գնային առաջարկները հետևյալն են՝

| No | Կազմակերպության անվանումը | Արժեք | ԱԱՀ-ն (ՀՀ դրամ) | Առաջարկված գինը (ՀՀ դրամ) | Առաջին և հաջորդաբար զբաղեցրած տեղերը |
|---|---|---|---|---|---|
| **Չափաբաժին 1** ԳԱԶ 2217 «Սոբոլ» մակնիշի ավտոմեքենայի պահեստամասեր | | | | | |
| 1 | «Գլոբալ Մոթորս» ՓԲԸ | 913192 | 182638 | 1095830 | 1-ին տեղ |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.5 Հրավերով (ծանուցումով) սահմանված՝ ծրարի կազմման և ներկայացման, բացված ծրարում հրավերով (ծանուցումով) պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով (ծանուցումով) սահմանված պայմաններին նախնական տվյալներով համապատասխանում է «Գլոբալ Մոթորս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.6 Հանձնաժողովը որոշեց.

ա) ՀՀ ՖՆ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «Ֆինանսական միջոցներ» որակավորման պահանջի առկայության վերաբերյալ;

բ) ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (Հավելված 5) և առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը ու տեխնիկական բնութագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.4 Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով նիստ հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համապատասխան եզրակացությունը ստանալու հաջորդ օրը, բայց ոչ ուշ քան 2016թ. փետրվարի 18-ին ժամը 11:00-ին, ք.Երևան, Զորափի 40 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի Նախագահ՝ | _______________ | Վ.Միրիջանյան |
| Անդամներ՝ | _______________ | Ս.Մանուկյան |
| | _______________ | Հ.Հարությունյան |
| Գնումները համակարգող՝ | _______________ | Կ.Սարգսյան |